**Համաձայնագիր-1**
**02.04.2019թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

**ք. Երևան** «06» հունիսի 2019թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի մի կողմից, և «Կոնսէլ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա.Փափազյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.04.2019թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. 02.04.2019թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2019 թվականի ապրիլի 2-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Կոնսէլ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք. Երևան, Արարատյան 90/2 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 1570004714720100 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 01539021 |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝ | «Կոնսէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| **Է.Գևորգյան** | **Ա.Փափազյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

APPROVED BY N.A.

Հավելված
Հաստատված է
«02» ապրիլի 2019թ. կնքված
N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/1 գնման պայմանագրի փոփոխությամբ

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

**ՀՀ դրամ**

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը | **Ընդամենը Տարի** |
| Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 4239 | | | | | 5 250 000 | 9 000 000 | 9 000 000 | 9 000 000 | 15 000 000 | 15 000 000 | 15 000 000 | **15 000 000** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պատվիրատու**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

**Է.Գևորգյան**
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Կոնսէլ» ՍՊԸ
ք. Երևան, Արարատյան 90/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570004714720100
ՀՎՀՀ 01539021
«Կոնսէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Ա.Փանոսյան**
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

APPROVED BY N.A.